ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյանի մոտ կայացած խորհրդակցության

20.02.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, հրավիրյալներ՝ Ալավերդի, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Գեղասար, Ազնվաձոր, Ձորագյուղ, Դարպաս համայնքներից:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝
1. 2019թ. Զբաղվածության ամենամյա «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում հաստատված ծրագրերի մասին տեղեկատվության տրամադրում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջներին համապատասխան Ծրագիր կազմելու վերաբերյալ մեթոդական ցուցումների տրամադրում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

3. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝
1. Ալավերդի, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Գեղասար, Ազնվաձոր, Ձորագյուղ, Դարպաս համայնքների ներկայացուցիչներին՝ համագործակցելով զբաղվածության տարածքային կենտրոնների հետ.
ա/ ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշման պահանջներին համապատասխան /հավելված 21/՝ կազմել ծրագրի նախագիծը և այն ներկայացնել Հանձնաժողովի քննարկմանը:
/ժամկետ՝ 12.03.2019թ./:
բ/ Աջակցել Ծրագրում ներգրավվող գործազուրկների հաշվառմանը:

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյանին՝
ա/ Համակարգել համայնքների կողմից ծրագրային առաջարկների ներկայացնելը Հանձնաժողովի հաստատմանը:
/ժամկետ՝ 15.03.2019թ./

3. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

Համակարգել Ծրագրի կազմման ընթացքում մարզպետարանի համապատասխան մասնագետների ներգրավվածությունը և մասնագիտական խորհրդատվության տրամադրումը:

/ժամկետ՝ 12.03.2019թ./:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՇԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/